Պետրոս Դուրյան

Իմ ցավը

Սուրբ տենչերով լոկ ծարաված՝
Ցամաք գտնե՛լ աղբերքն համայր,
Ցամքի՞լ ծաղիկ հասակի մեջ,
Ո՞հ, չէ այնչափ ցավ ինձ համար:

Ջերմ համբույրով մը դեռ չ՛այրած
Սա ցուրտ ճակատը դալկահար
Հանգչեցունե՞լ հողե բարձին,
Ո՞հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Դեռ չը գրկած էակ - փունջ մը
Ժըպտե, գեղե, հուրե շաղյալ՝
Գրկե՞լ սա ցուրտ հողակույտը,
Ո՞հ, չէ՛ այնչափ ցավ ինձ համար:

Քաղցր երազով միըղի մրափ մը
Չանդորրած գլուխս մըրկահար՝
Ննջել հողե վերմակի տակ,
Ո՞հ, չէ այնչափ ցավ ինձ համար:

Հագնի՞լ հյուղին մուր-անունը,
Ծըծե՞լ նորա մըրուր-օդն հար,
Միշտ ցավիլը միանգամայն,

Ո՞հ, չէ անչափ ցավ ինձ համար:

Հեգ մարդկության մեկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թըշվառ,
Չ՚օգնած անոր՝ մեռնի՚լ աննշան,
Ո՞հ, ա՛յս, է սոսկ ցավ ինձ համար:

1871